

26192

326

ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ 1

326

# Մ Ա Ն Ե Ա

Պ Ա Տ Մ Ի Ա Մ Ք

Գ Բ Ե Ց

ՍԱՀԱԿ ԹՈՐՈՍԵԱՆ

ՊՕՍԹՕՆ

ՄԱՏ. «ՀԱՅՐԵՆՆԻԲ»Ի ԹԻԻ 23

1912


891.99

թ-82

15 APR 2009

19 NOV 2011

1/3



891.99  
— ԴԵ 82

Ս. ԹՈՐՈՍԵԱՆ

# Մ Ա Ն Ե Ա

ՊԱՏՄԻԱԾՔ



ՀՐԱՏ. ., ՀԱՅՐԵՆԻԻԿ՝-Ի, ԹԻԻ 23.  
1912

19 APR 2013

31788



26132  
1184

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ» 7 Bennet st. Boston, Mass.



1146-1009

1

Սեպտեմբերի սկիզբն էր: Արևը գեներալից բաւական ցած էր իջել: Ամառուայ վերջն էր: Միջօրէի շոգը տեղի էր տւել երեկոյեան պահի զովին:

Վ. աւանի լայն հրապարակում մենակ մի կառք կար կանգնած: Կառապանը իր տեղում նստած, ձանձրոյթից գլուխն ուռցրած, սանձերը թոյլ-թոյլ ձգած՝ սպասում էր: Նա գոհ էր. ձիերը հանգստացել էին. օրւայ եկամուտն էլ լրիւ էր: Նա ի քանի ժամ առաջ արդէն վարձուած էր:

Դիմացի տնից դուրս եկան մի քանի հոգի՝ մի տղամարդ, մի կին, մի աղջիկ, երկու դըպրոցական և մի վեց տարեկան աղջիկ: Նրանք եկան դէպի կառքը: Կառապանը ձանձրոյթը յետ վանեց և նրանց մօտեցաւ:

— Մանեա՛, նստիր, — ասաց տղամարդը:

Մեծ աղջիկը մօտեցաւ կառքին, ապա կըրկին դարձաւ և ասաց.

— Մնաք բարև. մնաւ բարև, մայրի՛կ:

— Գնա՛ս բարև, — ասաց մայրը և համբուրեց նրան: Երկուսն էլ տխուր էին:

— Մանեա՛ ջան, անոյշ ջան, — շարունակեց մայրը, — չմտածես, գործիդ արի կաց: Ընդամէնը երկու ժամւայ ճանապարհ է, չո՛ւտ շուտ ե՛կ, մենք էլ կգանք:

Մանեան համբուրեց եղբայրներին ու քրոջը:

— Մանեա՛, այնպիսի տուն վարձիր, որ ինձ համար էլ տեղ լինի: Հէնց որ տօն եղաւ, մի

ձի եմ նստում և քեզ հասնում, — ասաց դը՛յրոցականներից մէկը, որ Մանեայի աւագ եղբայրն էր՝ տասնհինգ տարեկան մի պատանի:

— Ես էլ կգամ. ինձ համար էլ տեղ լինի, — աւելացրեց փոքր եղբայրը:

— Դո՛ւ էիր պակաս, — վրա բերեց մեծը և աջ թևով հրեց նրան:

— Ես էլ կգամ, ես էլ. քեզ համար կանֆետ կբերեմ, կարմիր, քաղցր կանֆետ, — ասաց փոքրիկ քոյրիկը և ձեռքով ցոյց տւեց կանֆետների չափը, — ա՛յ, այսքա՛ն:

— Բաւական է, երեխայք. նստիր, Մանեա՛, — ասաց հայրը և ինքը կառքը բարձրացաւ: Մանեան երկրորդ անգամ համբուրեց փոքրիկ քրոջը ու նստեց հօր կողքին: Կառքը շարժւեց, անցաւ հրապարակով, ծուռեց միւս փողոցը: Մանեայի մայրն ու փոքրիկները նայեցին, նայեցին, իսկ երբ կառքը անհետացաւ, մտան տուն:

Ձիերը վազում էին: Կառապանը մտրակը շարժում էր, բայց չէր խփում: Մանեան լուռ էր: Լուռ էր և հայրը՝ Արշակ Աթարէկեանը: Նա մտածում էր, մտքով համեմատում էր անցեալն ու ներկան: Այդ համեմատութեան առիթ տըւողը իր աղջիկն էր, որ գնում էր ուսուցչուհի լինելու Ա. գիւղում: Արշակ Աթարէկեանը հարուստ մարդու որդի էր, բայց հարստութիւնը ծնողների մահից յետոյ շնորհիւ իր կեանքի եղանակի հալւել էր նա քիչ-քիչ ձեռք էր քաշել անհոգ ու անհաշիւ կենցաղից և գաւառական դատարանում ծառայելով իրրև քարտուղար՝ հաղիւ էր կարողանում ընտանիքի անհրաժեշտ պէտքերը հոգալ: Այս էր պատճառը, որ նա համաձայնել էր թոյլ տալ իր սիրելի Մա-

նեային, իր անդրանիկ զաւակին ուսուցչուհի լինել, այն էլ քսան տարին դեռ չլրացրած հասկում, անփորձ, դպրոցը նոր աւարտած:

Նա անձամբ տանում էր աղջկան, որ Մանեան նեղութիւն չքաշի տուն վարձելիս, իրեր գնելիս: Նա յիշում էր, որ երբ ինքն աւարտեց դպրոցը, ոչ մի նեղութիւն չէր քաշում, ուրախ էր, գւարթ, չգիտէր՝ ինչ է նշանակում նեղօր, փողի պակասութիւն: Իսկ այժմ Մանեան պիտի գիւղում քարչ գայ, ենթակայ լինի սրա ու նրա քմահաճոյքին, որպէս զի փող աշխատի, հօրն օգնի, որ եղբայրները կարողանան ուսում առնել. մարդ դառնալ: Այդ մտքերը դառնութեամբ էին լցնում նրա հոգին, թախիծով պատում սիրտը:

Մանեան էլ էր խորհում: Լուռ, մտածկոտ՝ նա աւելի գեղեցիկ էր երևում: Նա սպիտակ էր, քնքոյշ. յօնքերը բարակ էին, նուրբ, կարծես, սև ներկով քաշած լինէին: Աչքերը թուխ էին, արտևանունքները՝ երկար: Մարմարէ այտերից իւրաքանչիւրի մէջտեղը մի փոքրիկ տեղ ներկւած էր արիւնի գոյնով: Սպիտակ, նուրբ շրջագգեստը պատել էր նրան հաճելի ձևերով: Աչքերը դէպի հեռուն ուղղած՝ մտածում էր: Նա նոր բաժանւեց մօրից, փոքրիկ հարազատներից: Անշատման ժամը միշտ տխուր՝ սրտի խորհրդաւոր ու թախծոտ բարախուռներ է ընծայում:

Բայց նրա գլխով ուրախ մտքեր էլ էին անցնում: Վերջապէս, սկսւում է այն կեանքը, որի մասին այնքան մտածել է: Այժմ հայրը կթեթեանայ հոգսերից: Այն միտքը, որ ինքը պիտի ձգտի, որքան կարելի է, քիչ ծախսել և աշխա-

տանքով հօրն օգնել, նրան բաւականութիւն էր տալիս: Հարկաւոր է լինել դիմացկուն, լուրջ, համեստ, որ գիւղացիների ծաղրի ու ծանակի առարկան չդառնայ: Այսպիսով թէ ինքը բեղուն աշխատանք կունենայ, անդորր կեանք, թէ ծնողների համար վիշտ չի ստեղծի: Նա յիշում էր մօրը, նրա աղերսական հայեացքը, նրա խըրատող խօսքերը:

Կառքը սլանում էր հա սլանում: Արևը դէպի սարն էր թեքում: Ճանապարհի ուղղութեամբ ընկած ծառերի սոււերները երկարում էին ու երկարում: Ահա բլուրների շարքերը: Ճանապարհն սկսում է դէպի վեր բարձրանալ: Ձիերը դանդաղեցրին իրենց քայլերը: Ահա մի գետ, խոր ու խշշան, և ապա այգիներ, լայնատարած այգիներ, կանաչ շղարշով սքօղած: Ճանապարհն ու կառքը թաղեցին առատ ծառերի մէջ: Ահա հեռուից երևաց գիւղը: Մարդիկ տուն էին վերադառնում: Խաղողի ժամանակն էր: Բազմաթիւ սայլեր ու ձիեր դէպի գիւղ էին շտապում: Կառքը հազիւ էր կարողանում ձանապարհ գտնել: Կառապանը դայրանում էր, հայհոյում ու զգուշութեամբ քշում ձիերին, որ սայլի ջընդհարելին, մարդ չտրորեն: Հասան գիւղը, մեծ, հարուստ, քաղաքի նմանող Ա. գիւղը: Կեանքը եռում էր փողոցներում, մանաւանդ շուկայում: Աշխատաւորներ, ձիաւորներ և իրանց փեշերով սոսկալի փոշի բարձրացնող կանայք խառնուել էին իրար...

Երբ կառքը հրապարակում կանգ առաւ, խանութների առաջ ձգւած մայթի վրայից երկու երիտասարդ մօտեցան նրանց: Մէկը լայն թիկունք, յաղթանդամ և խիտ մազերով մի երի-

տասարդ՝ ծանօթ էր նրանց: Նա բարեկեց և ընկերօջը ծանօթացրեց նրանց հետ: Ընկերը մի ուսանող էր, շիկահեր, խաժակն, բարձրահասակ, նուրբ կազմաւածքով, նիհար ու գունատ:

Արշակ Աթաբէկեանը վճարեց կառքի վարձը և, Մանեայի թեւից բռնելով, նրանց հետ անցաւ մայթի վրա: Կարճ խօսակցութիւնից յետոյ նրանք հրաւիրւեցան ուսանողի տունը և երկրորդ յարկի մի սենեակում հայր ու աղջիկ հանգըստանալու հնարաւորութիւն ստացան:

Սեւադէմ երիտասարդը դպրոցի աւագ ուսուցիչն էր, Մանեայի պաշտօնակիցը: Արշալոյս Մինասեան էր անունը: Ուսանողը՝ Աղեքսանդր Վարազեան. բոլորը Սաշա էին ասում:

Երեկոյեան թէյի ժամանակ բոլորն էլ սեղանատանն էին: Եկաւ և Սաշայի հայրը՝ Ադամ Վարազեանը: Սա որդուն բաւական նման էր: Նա առաջին բոպէից հէնց սկսեց ուրախացնել սեղանակիցներին: Նախ ծառային հրամայեց, որ կնոջը կանչեն: Սակայն նրա հրամանը անկատար մնաց. յայտնեցին, որ կինը կուշանայ, դադարած է. Այս լուրից յետոյ Ադամ Վարազեանը կատակով անիծեց կանանց: Ադամը աղջիկ չունէր: Կինը մի գիւղական տանտիկին էր, որ գիւղերից մին Սաշան էր, միւսը դեռ սովորում էր նահանգական քաղաքի դպրոցում: Ամէն ինչ վկայում էր, որ նա հարուստ էր, բայց կարգ ու ճաշակ չկար նրա տանը:

Մանեան քիչ էր խօսում, միայն իրեն ուղղած հարցերին էր պատասխանում: Երիտասարդներն էլ շատ չէին խօսում: Երկու հայրերը, ընդհակառակը, եռանդով խօսակցում էին տնտեսականի, առևտրի, նոյնիսկ քաղաքակա-

նութեան մասին :

Ժամը տասնմէկն էր, երբ Ադամը, ներո-  
ցութիւն խնդրելով, դուրս գնաց մի քանի կար-  
գադրութիւններ անելու : Երիտասարդները Մա-  
նեային ու հօրը հիւրասենեակ առաջնորդեցին և  
իրանք դուրս եկան զբօսնելու :

Հետեւեալ օրը Արշակ Աթաբէկեանը աղջկայ  
համար սենեակ վարձեց, անհրաժեշտ իրերն ա-  
ռաւ ու գնաց :

\* \* \*

Դեռ երկու տարի առաջ էր, որ Արշալոյսը  
ծանօթացաւ Մանեայի հետ : Այն ժամանակ օրի-  
որդը 17 տարեկան էր, շարժուն, մանկական  
անմեղութեամբ լի : Արշալոյսը շատ շուտ սկսեց  
դէպի նա համակրանք տածել : Նրանք յաճախ է-  
ին իրար պատահում : Երիտասարդը գաղտնի  
մտքերից ու լուռ յոյզերից դուրս ուրիշ արտա-  
յայտութիւնների չէր դիմում : Մանեան էլ ոչ  
մի անգամ չէր կասկածում, թէ Արշալոյսը բա-  
րեկամական մտերմութիւնից զատ ուրիշ ցան-  
կութիւններ էլ է փայտայում :

Մենութեան ժամերին Արշալոյսն ընկնում էր  
խոհերի մէջ : Երբ երեկոն իր խորհրդաւոր մութ  
շղարշը տարածում էր երկրի վրա, նրա մտքերն  
աւելի էին խորանում, թուխ ճակտաւոր աւելի էր  
մռայլում : Նա հոգսեր, ծրագիրներ շատ ու-  
նէր, բայց արգելքներն էլ պակաս չէին, մանա-  
ւանդ տնտեսականի պակասը անդադար խանգա-  
րում էր նրան : Նա մտորում էր իր ապագայի  
մասին և լուսաւոր կէտեր քիչ էր գտնում :

Երբեմն, մտածմունքի ժամերին, նրա սև  
մտքերի մէջ քիչ-քիչ բարձրանում էր մի պատ-  
կեր, որ լոյս էր սփռում իր շուրջը և ցրում  
ամպոտ յոյզերը : Մանեայի պատկերն էր այդ :  
Արշալոյսն սկզբում իր զգացմունքներին առան-  
ձին նշանակութիւն չէր տալիս, բայց յետոյ սկը-  
սեց հաւատալ, որ Մանեայի սէրը իր ապագայ  
ուղին կ'լուսաւորի : Եւ նա սպասում էր Մանեա-  
յին, սպասում էր, որ օրիորդն աւարտի դըպ-  
րոցը : Այդ մասին նա ոչոքին չէր ասում :

Երբ Արշալոյսը կարգւեց Ա. գիւղի աւագ  
ուսուցիչ, Մանեան էլ աւարտեց, որոշեց նրան  
ուսուցչուհի հրաւիրել, մանաւանդ, որ իրեն  
ծանօթ էին Արշակ Աթաբէկեանի ընտանեկան  
պայմանները :

Մանեայի դալու առաջին օրը նրանք յարմա-  
րութիւններ ստեղծելու հոգսով էին զբաղւած :  
Ամեն ինչ կարգի բերեց : Դասերն սկսեցին :  
Դպրոցական միապաղաղ, միանման և տաղտուկ  
օրերը շարուեցին իրար յետևից : Աշունն էլ շու-  
տով վրա հասաւ :

Աշնան մեղմիկ զեփիւրի թևով Արշալոյսի  
սիրտը սողաց սիրոյ քնքոյշ ու հզօր կայծը՝ է՛լ  
աւելի շիկացած, է՛լ աւելի ալրոյղ : Նրա յոյզերն  
ու խոհերը կեդրոնացան Մանեայի շուրջը : Նա  
գիշերները չէր կարողանում քնել, ցերեկ-  
ները՝ լուրջ աշխատել : Դասերի ժամանակ, յան-  
կարժ, մոռանում էր, թէ ուր է գտնուում, սկը-  
սում էր մտածել : Ամէնքը նկատում էին, որ  
նա օր օրի վրա փոխւում է, նիհարում, սակա-  
ւախօս է դառնում :

•••

Մանեան այլ մտքերով էր տարւած : Հօր նիւթական անապահով դրութիւնը, ընտանեկան հոգսերը և իրենց տանը յաճախ կրկնուող տխուր պատմութիւնները անցեալ հարուստ կեանքի մասին նրա մէջ շատ վաղ էին հասունացրել ապագայի մասին ծրագիրներ կազմելու միտքը : Նրա ծրագիրները առ այժմ վերաբերում էին հօրն օգնելու հարցին : Նա աշխատում էր իր երիտասարդ սրտի ցանկութիւնները վրա իջխել, հռու մնալ հրապուրանքից, որպէսզի նպատակից չչեղւի, մինչև եղբայրները մեծանան : Այն ժամանակ միայն ինքն իրաւունք կունենայ անձնականի մասին մտածելու, հոգալու :

Արշալոյսի աչքերի ծակող հայեացքը նա նըկատեց : Այդ օրւանից վախի պէս մի զգացմունք բուն դրաւ իր հոգում : Նա ամեն ձիգ ու ջանք թափում էր, որպէսզի այդ հայեացքին չհանդիպի, Արշալոյսի հետ մենակ չմնայ : Նա սոսկում էր այն մտքից, որ ինքը կխորտակէ իր ծրագիրները : Իր և Արշալոյսի հոգու զուգակցութիւնը նրան անհնար էր թւում : Նա վախենում էր աւագ ուսուցչի թուխ ու մռայլ դէմքից, սև աչքերից, անձանօթ հոգուց...

\* \* \*

Ուսանող Սաշան երկար ժամանակով էր գիւղում մնալու, որովհետև հիւանդ էր, ու բժիշկներն արգելել էին մի առ ժամանակ պարապել : Նա դպրոցի ստորին դասարաններում աչքի էր ընկնում իր արտաքինով : Շատերին գրաւե-

լու չափ գեղեցիկ էր : Նա մետաքսի պէս նուրբ մազեր ունէր : Հագնուում էր ճոխ ու ճաշակով, լինում էր բալոր պարերի կոյճներին : Նրան շքեղապատում էին օրիորդները. և նա հաճոյքով նրանց մէջ էր անցնում իր ժամերը : Սակայն հետզհետէ նա լրջացաւ, ձեռք վերցրեց յաճախակի զւարճութիւնից և անձնատուր եղաւ աշխատանքի : Դասերի վերաբերմամբ միշտ էլ անտարբեր մնաց, միշտ էլ դասարանը փոխում էր բաւարար թւանշաններով : Նա գրքեր էր կարդում, կարդում էր անդադար. լուրջ և ուշադիր : Աւարտելիս զարգացումով ընկերներից բարձր էր :

Մանկութիւնից նա խոր յուզմունքներ և մեյամաղձոտ տրամադրութիւն ունէր : Նրա կարդացած բաղմաթիւ գեղարւեստական գըրքերը իր զգացմունքները չափազանց մշակել, քնքշացրել էին, նրան դիւրազգաց դարձրել : Ուսանող ժամանակ ևս նա գեղարւեստը չթողեց : Գեղեցիկը պաշտելը նրա բնաւորութեան էական գծերից մէկն էր դարձել : Նա սիրում էր կարմիր վերջալոյս, թախժոտ աշուն, գեղեցիկ նկար, կախարդիչ արձան, յուզող երաժշտութիւն : Սըրանց մասին աւելի էր հոգում, քան ուսուցչապետների դասախօսութիւնների :

Նա երեք տարի ապրեց Մոսկւայում : Վերջին ամիսներում չէր կարողանում պարապել : Ցերեկը, կէսօրի մօտերքը նրա գլուխը ցաւում էր, նրան պատում ինչ որ ջերմ, նա դառնում էր դիւրաբորբոք : Առանց պատճառի բարկանում էր, զրգուում, որին յաջորդում էր գլխացաւ : Նա դիմեց բժիշկներին ու նրանց խորհրդով գիւղեկաւ հիմնաւորապէս հանգստանալու և ջղերն ամրապնդելու նպատակով :



Սկզբում նա մասնակցում էր սևանոդական շարժումներին, համակրում էր ընկերային ու յեղափոխական գաղափարներին: Սակայն յետոյ գգաց, թէ ինքը չի կարող ունէ կազմակերպութեան իսկական անդամ դառնալ, ենթարկել ծրագրի ու կարգապահութեան: Յեղափոխութեան օրերին նա ապրում էր տենդային վիճակի մէջ: Նրա հոգում արթնանում էին կենդանարար յոյսեր: Նա ոգևորում էր, իրեն մոռանում: Նրան չէր գրադեցնում այս կամ այն կուսակցութեան յաղթանակը: Ո՛չ, նրա ոգևորութեան գլխաւոր աղբիւրը իր ազատասէր ոգին էր: Այդ կուրի մէջ նա տեսնում էր մի խորհրդաւոր, մի գեղեցիկ նպատակ, որը նրան յափշտակում էր: Յեղափոխութիւնից յետոյ նա սկսեց հասարակական-փիլիսոփայական հարցերով գրադել: Շատ անքուն գիշերներ ու երկար ժամեր նւիրեց այդ հարցերին:

Յաճախ կինը նոյնպէս դառնում էր Սաշայի մտածմունքների առարկայ: Պատանի հասակում նա շատ էր ընկնում օրիորդների յետևից: Երբ լրջացաւ, սկսեց այդ հարցին ևս հասուն հայեացքով մօտեննալ: Կինը նրան զբաղեցնում էր: Նա զգում էր, որ տղամարդը ճակատագրական անհրաժեշտութեամբ կապուած է կնոջ հետ: Երբեմն որոշում էր կնոջ վրա նայել սառնութեամբ, տարբերութիւն չդնել նրա ու տղամարդու մէջ, բայց մի գեղեցիկ կին, կանացի աչքերի մի խորհրդաւոր շարժում, և նրա բոլոր ծրագիրները, տրամաբանութեամբ կառուցած բոլոր երրակացութիւնները փուլ էին գալիս: Նա մտածում էր կանանց գեղեցկութեան մասին, յուզւում էր, տարւում իր տաք մտքերով: Տղամարդու ու կը-

նոջ յարաբերութեան, կրքերի այդ հզօր բռնկման խորհրդաւոր գաղտնիքը նա չէր կարողանում լուծել...:

Երբ Մանեան գիւղ եկաւ, առաջին երեկոն հէնց Սաշան գրաւեց: Հինգ ամիս էր, որ գիւղումն էր, ուրեմն և կանանց հասարակութեան մէջ չէր եղել: Գիւղի կանանց վերաբերմամբ նա շատ սառն էր, նոյն իսկ մի տեսակ յարգանք էր տածում դէպի նրանց: Մանեայի գեղեցկութիւնը, լուսկեցութիւնը իր վրա դարձրեց Սաշայի ուշադրութիւնը: Երբ կինը լուում է ու մտածում, զգայուն տղամարդը անտարբեր լինել չի կարող: Երբ Սաշան մնաց մենակ, զգաց, որ սրտի լարերը շարժւել են: Աշխատեց ցրել իր մտքերը, բայց չկարողացաւ: Նրա ճակատը վառւում էր: Բացեց պատուհանը: Զով օդը ներս մտաւ սենեակ: Այդ էլ չօգնեց: Նա դուրս եկաւ: Պատշգամբը լայն էր ու երկար: Պարզ լուսնկայ գիշեր էր, ամառայ վերջի հոյակապ գիշերներէց: Օդը քիչ պաղ էր: Տան առաջ սփռւած էր խաղողի այգին: Կաթնագոյն գծազրում էին ծառերը՝ բարդիները՝ բարակ ու երկար՝ կատարները մշուշում կորցրած, ընկուղենիները՝ հաստ ու լայնատարած, սողարթախիտ, ապա ցածրիկ ծառերը, թփերը, վիթխարի հարեանների առաջ կռացած, նրանց սուերում պատսպարւած: Սաշան քայլում էր յետ ու առաջ: Մտքերը կլանել էին նրան: Նա քայլեց, քայլեց, ապա, յանկարծ, իջաւ սանդուղքով ցած և անյայտացաւ ծառերի մէջ:

Իսպրոյական միանձան օրերն անցնում էին իրար յետեից: Յերեկները կարճանում էին ու կարճանում: Դեռ դասերը չվերջացած՝ արևը հեռանում էր երկնքից: Մանեան ճաշից յետոյ նստում էր փոքրիկ սենեակում ու մտածում: Միապաղաղ օրերը, աշնան ամպամած երկինքը, դեղնած տերևները նրա սիրտը լեցնում էին ձանձրոյթով ու կարօտով: Մենակութեան ժամերը նրան խեղդում էին, նա տենչում էր ունեւնալ մտերիմ մէկը, մի ընկեր, որը նստէր իր հետ ու սիրտ սրտի տար, դարդ-դարդի: Երբեմն, երբ ձանձրոյթը մեծանում էր նրա կրծքում, նա վերցնում էր տանաիրոջ փոքրիկ աղջկան, իր աշակերտուհուն և գնում էր գրօսնելու: Անցնում էր այգիների միջով, ծառերի անլուհատ շարքերով, նստում էր ժայռերի վրա: Գուրգուրում էր փոքրիկ աղջկան, փաղաքշւում: Տուն էր դառնում աւելի տխուր, աւելի խորն զգալով իր մենակութիւնը:

Մի քանի անգամ ծանօթ գիւղացիները ներքան իրենց տուն հրաւիրեցին: Այնպէս էլ բաւականութիւն ստանալ չէր կարողանում: Գիւղացի կանայք իրենց անվերջ բամբասանքներով Մանեային ձանձրացնում էին, ներքուստ բարկացնում: Իր պաշտօնակից վարժուհու հետ ևս չէր կարողանում մտերմութիւն հաստատել: Նա քնքն էր, կարծես, Մանեայից խուսափում:


Տեղացի պաշտօնեաների կանայք յաճախակի

1961921 1446-2009

հաւաքում էին իրար մօտ: Մանեան ծանօթացաւ, եղաւ նաև նրանց շրջանում: Նրանք էլ միշտ թուղթ, մանաւանդ, լօտօ էին խաղում: Բամբասելու կողմից դեղջկուհիներից պակաս չէին: Մանեան չէր խաղում: Նա գիտէր, թէ թուղթը որքան թանգ է նստել իրենց տան վերա: Չէ՛, նա մենակ է մնալու, մենակ այս խուլ անկիւնում, իր երիտասարդ սիրտը պիտի այստեղ ճմլւի ու ճնշւի: Ուրիշ ելք չկար: Պէտք էր աշխատել:

Մի օր ճաշից յետոյ Մանեան մենակ ման գալու դուրս եկաւ: Նա իջաւ տան առաջ փրօւած այգին, ապա անցաւ հեռու, հասաւ գետին ու նստեց մի քարի վրա: Նա չգիտէր, թէ ինչու է արագ քայլում: Ծակատին քրտնքի մանրիկ կաթիլներ էին ցօղացել: Նա մտածում էր: Յիշեց իր անմեղ մանկութիւնը՝ ուրախ ու անհոգ: Յիշեց այն շրջանը, երբ տղամարդիկ սկըսեցին իրեն հետաքրքրել: Նոյնիսկ մտաբերեց այն ժամը, երբ առաջին անգամ իր սրտում ծըււեց հաճոյքը տղամարդու հայեացքի ներքև: Այդ մի երեկոյ էր, մի ուրախ հանդիսում: Մի շիկահեր դպրոցական խայթող հայեացքով ներքան էր նայում անդադար, ամբողջ հանդիսի ընթացքում: Այդ օր առաջին անգամ ճաշակեց տղամարդու փնտրող աչքերի գրաւչու թիւնը:

Ուրիշ մտքեր էլ անցան նրա գլխով: Մտքի հոսանքի միջից գլուխ բարձրացրեց և գծադրեց Սաշան: Մանեան կանգնեցրեց իր մտքի թռչընները, մտածեց: Նա մի սարսուռ զգաց, ապա հոգի շոյող ջերմութիւն: Չլինի՞ թէ սիրում է նրան: Նա քաշւեց այդ մտքից, նոյնիսկ ոտքերը թեթև դողացին: Ինչո՞ւ չպիտի ելաւ, և, որպէս-



զի մաքերը ցրւի, նսյեց Հեռու, գետի միւս կողմը: Մի հօտաղ նստել էր քարի վրա, գըրկել մի սպիտակ խոյլ՝ գլուխը ու համբուրում էր: Թոյը հանգիստ կանգնել էր և դժգոհութեան ոչ մի նշան չէր ցոյց տալիս: Հսկայ դամփուը նստած՝ նայում էր այդ տեսարանին: Սքանչելիներդաշնակութիւն, մտածեց Մանեան, սիրում ու գուրգուրում են և չեն էլ մտածում, որ ուրիշները նայում են իրենց, նայում են ու նախանձում:

\* \*

Մի երեկոյ Մանեան հրաւիրեց իր պաշտօնակից՝ կրօնուսոյց Տէր Եսայու մօտ: Այս քահանայի դռները բաց էին գաւառական մտաւորականութեան առաջ: Գիւղն այցելութեան եկած ամէն մի կրթւած անձ նրա հիւրն էր: Ուսուցիչներն ու վարժուհիները նրա մշտական այցելուներն էին:

Ընթրիքից յետոյ սկսեցին զանազան խաղեր խաղալ: Մի քանի անգամ խաղը փոխեցին, որպէսզի չձանձրանան: Երբ նրանց գիտեցած խաղերն սպառւեցին, մի քիչ ժամանակ չը գիտէին, ինչ անել: Յանկարծ, Արշալոյսն աւասց:

— Պարոններ, ես մի նոր խաղ յիշեցի: Յիշում եմ աշակերտ ժամանակ մի տեղ հիւր էի, այս խաղը փորձեցին, և մեծ տպաւորութիւն տրաւ:

— Բացատրէք խաղի էութիւնը, — ասացին մի քանիսը:

— Շատ պարզ է: Մեզանից իւրաքանչիւրը թող պատմի իր կեանքի ամենահետաքրքրական դէպքը: Պատմողը պիտի կանգնի և ծանր ու գեղեցիկ առողանութեամբ պատմի այն, ինչ որ

ինքը իր կեանքի ամենահետաքրքրական դէպքն է համարում: Ծրագրը պիտի մարննք: Եթէ իրօք հետաքրքրական լինի, և ունկնդիրները ծափահարեն, այն ժամանակ պատմողը իրաւունք է ստանում համբուրել ներկայ եղողներից մէկի ձեռքը, ում ինքը կամենայ:

Մի քանիսը համաձայնեցին, ոմանք կարծում էին, որ հետաքրքրական չի լինի: Մանեան չէր իմանում, համաձայնի՞, թէ չէ: Նա, կարծես, այդ առաջարկութիւնից վախեցաւ: Եթէ ինքը պատմելու լինի — ի՞նչ ասի: Ի վերջոյ ընդհանուր համաձայնութիւն եղաւ: Վիճակը պիտի ձգէին հերթը որոշելու համար: Որոշւեցաւ, որ կարելի է նախ հերթից հրաժարւել:

Վիճակ ձգեցին: Առաջին համարը Սաշային ընկաւ: Նա մի քանի րոպէ մտածեց անվճռակաւ՝ նութեամբ, բայց համաձայնեց: Լոյսը մարեցին: Սաշան կանգնեց: Դուրսը փշում էր աշնան ցուրտ քամին: Մտռերն օրօրում էին, ճիւղերն իրար քսում, տերևները թափւում էին և խորհրդաւոր փսփսուկ բարձրացնում...

— Ընկերներ, սկսեց նա, ես ուզում եմ պատմել մի հրաշալի դիպուած: Լէ՛խ, ներէք, գուցէ ես սխալւում եմ, գուցէ այս մի սովորական պատմութիւն է, կամ մի անհաւատալի հեքեաթ ու երազ: Ինձ թւում է, որ այս իմ կեանքի ամենահետաքրքրական դէպքն է, գուցէ դէպք էլ չէ, այլ լոկ մի պատրանք:

Մի անգամ ներս սողաց իմ հոգին մի քընքոյշ, մի դարդոտ յոյզ: Մի քանի տարի առաջ էր: Ես աշակերտ էի: Ապրում էի այն հասակը, երբ պատանու հագում սկսում է յոյզերի փոթորիկը: Ոչ աշխատել էի կարողանում, ոչ հան-

գըստանալ: Ի՞նչ էր պատահել, չեմ կարող լաւ որոշել, բայց զգում էի, որ դրա պատճառը մի հայեացք էր, աչերի մի թովիչ շարժում: Ես միայնութեան ու մտորումների ժամեր էի որոնում:

Յիշում եմ, ծննդեան տօներն էին: Ես դարձեալ գիւղումն էի: Մի երեկոյ սենեակումս նըստած՝ մտածում էի: Ուզում էի նամակ գրել նըրան, որի հետ չէի խօսել, որի հոգին չէի ճանաչում, բայց որի հայեացքից ջղերս դողում էին: Ես նրան պատահել էի մի հանդիսում: Վաւարանը վառում էր շէլուսնեակը պլպլում պարզ, սառնամանիք գիշերին: Դուրսը պարտէզի ծառերը սպիտակ փնջեր էին կապել:

Ես արկղիկս հանեցի, վերցրի մի թերթ վարդագոյն թուղթ: Գրիչս թաթախեցի ծիրանի թանաքի մէջ և գրեցի առաջին բառը՝ Ս ի բ և լ ի ս... Այդ բառի պատկերի հետ սրտումս ծնեց լոյսի մի շող, ինձ պատեց մի ջերմութիւն: Ես չկարողացայ շարունակել, պատկերները խառնեցին գլխումս: Գրիչս վալր դրի և ընկայ մահճակալի վրա: Կարծեմ քնեցի: Մտքերս սկսեցին սլանալ...

Ինձ թւաց, թէ, յանկարծ, սենեակս լուսաւորեց կայծակի փայլով: Վառարանի միջից գուրս եկաւ մի մարդ, կրակէ լախտը ձեռքին: Այս բոլորը կատարեց ակնթարթից էլ արագ, և ես չկարողացայ որոշել, թէ ինչ արարած էր այդ նորեկը: Ես նոյնիսկ վախեցայ, ոչինչ ասել չկարողացայ:

Նա ձեռքը դէպի դուռը մեկնեց ու նշան արքաւ, որ իրեն հետևեմ: Վերարկուս հագա՞յ, գըլխարկս դրի — չեմ յիշում: Դռան առաջ նկատեցի, որ ինձ այդպէս յսնդգնութեամբ հրամայողը

ամբողջովին սպիտակ էր հագած:

Երկար գնում էինք մենք: Ես քայլում էի նրա յետևից կախարդւած: Զիւնը ոտներիս տակ ճռճում էր: Ժամը քանիսն էր, չգիտէի: Իմ առաջից չքացաւ սպիտակօտիա սարը: Մենք մի հովիտ մտանք և ապա սկսեցինք ձորը իջնել: Իմ դէմքին դարնան շունչ դիպաւ: Այլևս ձիւն չը կար, փչում էր մեղմիկ զեփիւր, ջն՛րմ, դուրեկան: Կատարեալ գարուն էր: Թւում էր, որ ծանօթ վայրում եմ: Ես ուժերս հաւաքեցի ու շուրջս նայեցի: Իսկապէս, գտնւում էի Աստուածածնի այրի մօտ: Ահա նեղ արահետը, ապա փայտեայ վանդակները՝ կարմիր գոյնով ներկւած: Նոյն իսկ երևում են անւանս սկզբնատառերը, որ ես մի տարի առաջ փորագրել էի վանդակների շրջանակի վրա: Ամեն ինչ ծանօթ էր, նոյնիսկ այն երկու սպիտակ աղւանին, որոնց սովորաբար կէրակրում էի այստեղ դրօսանքի գալիս: Նստած այրի մուտքի ժայռի վրա, նրանք ինձ էին նայում և գուցէ ուրախանում էին, համոզւած լինելով, որ ես հատիկներ էի տանում գըրպանումս: Գետակն էլ դարնան յուզումնալի երգն էր ասում, առոյգ ու զւարթ: Աստուած իմ, մի գիշերւայ մէջ դարձն եկաւ...

Սպիտակ մարդը կանգ առաւ այրի դռան առաջ: Ես ևս կանգնեցի: Զէի հանդուրժում նրա երեսին նայել: Աչքերս ուղղել էի այն սև քարին, որի վրա նստում էի ես յաճախ, կարդում կամ հրճւում բացւող տեսարանով:

— Վերև նայի՛ր, — ասաց իմ դաժան առաջնորդը:

Եւ ես նայեցի ու սոսկացի, տեսնելով նրա աչքերը, որոնք օձի աչքերի նման էին:

— Դու շատ անգամ ես այստեղ եկել: Ասա՛ ինչ ես տեսել այրի ներսը:

— Առանձին ոչինչ, երկու սև քար, մոմի կտորներ, ձէթի ճրագներ, ահա բոլորը, որ ես տեսնում էի այստեղ, — պատասխանեցի ես:

— Դու կոյր ես: Մարդիկ բոլորն էլ կոյր են ծնւում: Կոյրը չի կարող տեսնել այն, ինչ որ բաժանում է քեզնից այս դուռը: Հետևի՛ր ինձ:

Եւ նա մտաւ այրը: Ես հետևեցի նրան: Մի մեծ կանթեղ ճաճանչափայլ լոյս էր սփռում շուրջը: Այրը, որ սովորաբար կիսախաւար էր բրևացել ինձ, պայծառ յուսաւորւած էր: Այրի խորքում կար մի մեծ, երկաթեայ դուռ: Դռնան առաջ նստած էր մի ծերունի, երկար, սպիտակափառ մորուքով ու մազերով, հրեղէն աչքերով: Նրա հազուստը մետաքսեղէն էր, հրային ցուքերով: Իմ առաջնորդը գլուխ տւեց ու անյայտացաւ: Իմ առաջ կանգնեց մի կին: Նա ձեռքերը աչքերիս մօտեցրեց, վայրկենաբար ամէն ինչ չքացաւ: Ես ոչ տեսնում էի, ոչ լսում: Ապա աչքերս այրող բոցը հեռացաւ: Այն կինը չկար: Ես դարձի՛ էի, շէի վախենում այլ ևս և ինձ ուժեղ էի ղգում:

— Դու այժմ կոյր չես, կարող ես մտնել այս դռնով և տեսնել, ինչ կայ այնտեղ: Մարդիկ որոնում են ու չեն գտնում:

— Ո՞վ ես դու, — հարցրի ես:

— Ես մեծ մոզն եմ, պահապան եմ կարգւած այս դռանը, որի միւս կողմն է գտնւում անչէ՞ջ հուրը, որը որոնում են և չեն գտնում:

— Մի՞թէ անչէ՞ջ հուրը իսկապէս գոյու՞թի՞ւն ունի:

— Այո՛, նա կայ, կայ իսկական կեանքում

Մարդիկ որոնում են ու չեն գտնում:

— Իսկական կեանքը ես տեսել եմ, այնտեղ, մարդկանց մօտ, չկայ: Ես ծանօթ եմ գիւղի խաղողութեանը, քաղաքի աղմուկին, ես եղել եմ լեռների վրա, ձորերում, բայց անչէ՞ջ հուրը չեմ տեսել: Հեքեաթներում են պատմում այդ մասին:

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց ծերունին, — կեանքը հէնց հեքեաթ է: Գիւղի ճահիճը, քաղաքի ժխորը այդ հեքեաթի փոքրիկ, աննշան բեկորներն են: Մարդիկ այդ տեսնում են: Քչերը որոնում են, չեն գտնում ու դժբախտանում են: Մեծամասնութիւնը չի որոնում ու մնում է խաւարում: Կամ խաւար, կամ դժբախտութիւն, ահա մարդու վիճակը: Ժամանակ է, մտի՛ր:

Եւ ես բաց արի երկաթէ դուռն ու մտայ:

Լեզուս չի կարող նկարել այն, ինչ որ ես այնտեղ տեսայ: Այդ մի անծայր պարտէզ էր: Արևի անհամար ճառագայթները համասփիւռ լոյս էին տարածում: Իսկ որտեղ էր արևը, լոյսի մայրը, չիմացայ: Այնտեղ ամեն ինչ արևի մէջ էր: Թիթեռնիկները հազար երանգով խաղում էին ծիածանի եօթը գոյների հետ: Երկինքը մի նուրբ, ճաճանչափայլ քօղ էր սփռում ծառերի ու ծաղիկների վրա: Թռչնիկները ծըլվում էին ու ոստոստում այդ քօղի տակ: Ես անցայ ծմակներով, նստեցի հաղարթերթեայ վարդենիների սոււերներում, մինչև սրտիս խորքը ծծեցի ափսինդի ու յամիկի բուրմունքը, ապրիմ-մեռնիմներից պսակ հիւսեցի, յակինթով կուրծքս գարդարեցի: Երբ ձեռքս մեկնեցի և մի անմոռուկ պոկեցի, ծաղիկը կապոյտ աչերով ինձ նայեց, յետոյ աղաւնի դարձաւ ու թռաւ: Ես վազեցի նրա յետևից, նա հասաւ

կաթնաղբիւրին և ջուրը սուզուեց : Ինձ բռնեց մի կսկծոտ կարօտ : Սիրտս այն աղաւնին էր ուզում, որ առաջ ծաղիկ էր և կապոյտ աչեր ունէր : Ես նստեցի աղբիւրի մօտ : Որքան մնացի նստած, չեմ յիշում : Ժամանակը չափելու չընորհքը կորցրել էի : Ես խեղդւում էի կարօտից : Ես սիրում էի աղաւնին, որ սուզուեց կաթնաղբիւրի մէջ : Ես արտասուեցի : Արցունքիս մի յըստակ կաթիլ դլորեց այտերիս վրայով և ընկաւ աղբիւրի ակը : Աղբիւրը մի ակնթարթում վճիտ ու թափանցիկ դարձաւ : Ես նկատեցի սպիտակ աղաւնին, որ քիչ-քիչ վերև էր բարձրանում : Նա գլուխը ջրից հանեց և մի փերի դարձաւ, մի չքնաղ աղջիկ՝ Աստղիկի մարմարէ արձանի նման : Նա ժպտեց և իմ հոգում յուզեցին հըրճւանքի շողերը : «Ինձ համար լաց եղա՞ր», ասաց նա աստուածային ձայնով : «Այո՛», պատասխանեցի ես : Նա ձեռքերս բռնեց, կանգնեցրեց, ապա նստեց աղբիւրի մօտ, ժայռի վրա, մամռապատ ժայռի վրա : Ես մոռացայ ամէն ինչ : Սրտիս յուզումը անեց : Նստեցի նրա կողքին, նրա աչքերին նայեցի : Ես նրա հայեացքից հարբեցի : Ես գրկեցի նրան, նա ժպտաց : Ես համբուրեցի նրա վարդ շրթները : Նոյն վայրկեանում երկու շողերը բաղխեցին հոգումս : Բոլոր ծառերը տատանեցին իրենց գլուխները, բոլոր տերևները փսփսացին, և բոլոր ծաղիկներից բիւրաւոր գոյներով թերթիկներ թափուեցին մեր գլխին, լոյսի շողերը պսակ կապեցին մեր շուրջը : Հնչեց թռչունների մեղեդին, ու հազարաւոր դայլայլիկները անձաւների խորքերից արձագանք տւին այդ եղեմական երաժշտութեանը : Սկսեց մի ներդաշնակ համերգ, աստուածներին

վայել . .

Ես անթիւ անգամ համբուրեցի, նա անհամար անգամ ժպտաց : Նա երկնային հանոյք էր սուզում իմ արեան իւրաքանչիւր ցող-կաթիլէ մէջ : Ես ապրում էի սիրոյ ամենահոյակապ բուսակներ : Անշէջ հուրն էր բորբոքել : Կարմիր գատիկները, պէսպիսագոյն թիթեռնիկները ճախրում էին շուրջը . . .

Լսեց մի խրոխտ ձայն : Երաժշտութիւնը դադարեց : Ծառերը նորից շարժեցին իրենց գլուխները, տերևները վերջին անգամ շնչացին, ծաղիկները ձգեցին իրենց վերջին թերթիկը : Նա նորից աղաւնիի փոխեց և նետեց աղբիւրի ակը : Տիրեց մի խորհրդաւոր լռութիւն : Ես կանգնած էի մենակ : Ես պոկեցի ծաղկի փնջերն իմ կրթքից ու իմ մազերից և նետեցի ջրի մէջ : Իմ սրտում բորբոքեց կարօտը, մեծ կարօտը, սիրոյ յաւերժական որոնողը, ես տխրեցի, անսահման տխրեցի . . .

Իմ առաջ ցլեց իմ սպիտակ տառնորդը՝ կրակէ լախտը ձեռքին : Հնազանդւելով՝ քայլեցի նրա յեռեկից : Ճանապարհին շատ կենդանիների պատահեցինք : Եւ եղնիկ կար այնտեղ, և այժեամ : Հպարտ առիւծը ճանապարհ էր տալիս մեզ, իսկ դիւխին թագ դրած օձերը իրենց մտաքսից էլ նուրբ լեզուներն էին ցոյց տալիս . . .

Մենք հասանք երկաթէ դռանը, բաց արինք և դուրս եկանք պարտիզից :

— Ի՞նչ տեսար, — հարցրեց պահապան մոզը :

— Ամեն ինչ : Ես պատմել չեմ կարող : Ես այրւում եմ կարօտից : Այս մի երազ էր, մի անհուն երազ :

— Կեանքը երազ է, երազն էլ՝ մի կեանք,

կեանքն ու երազը հեքեաթ են, հեքեաթն էլ՝ երազի սաւերը: Սէրն է կեանքի ծաղիկը: Ով սիրում է՝ ապրում է. սիրով ապրելը հէնց երազ է: Գնա՛, մարդկանց մի՛ պատմիր, նրանք կծիծաղեն վրադ:

Ինձ մտեցաւ նոյն կինը, ձեռքերը քսեց աչքերիս: Ամեն ինչ չքացաւ: Ես դուրս եկայ մութ այրից: Յուրտ օդը կպաւ դէմքիս: Ես ասրսուեցի ու աչքերս բաց արի:

Պառկած էի անկողնիս վրա: Պատուհանիս օդանցքը բաց էր, սենեակս ցրտել էր: Ես սկսեցի մտածել: Այդ, ի հարկէ մի երազ էր, նեարդերի անզգոյշ խաղ: Հրաչքների դարը վաղուց է անցել: Յետոյ շատ մտածեցի: Երա՛զ թէ իրականութիւն — այդ մի՞թէ միևնոյնը չէ...

Ընկերնե՛ր, ինձ վրդովող աչքերը այլևս ես չտեսայ: Սրտիս կրակը պլպլաց, ապա նւազեց, մխաց ու մարեց: Անցան տարիներ: Այժմ՝ նորից իմ սրտում կայծեր են բորբոքում: Ես նորից պատահեցի այն աչքերին, նորից հոգիս խռովել է, կարօտը գլուխ է բարձրացրել... Վերջացրի, լոյսը վառէ՛ք:

Բոլորը ծափահարեցին: Մանեան յուզւած էր: Երբ Սաշան վերջացրեց, նա մի բացաբանչութիւն արձակեց: Վի՛շտ էր, թէ խինդ, դժուար էր որոշել:

— Պարոննե՛ր, — աւելացրեց Սաշան, — խաղի երկրորդ մասը չեմ շարունակում: Ես չեմ ուզում համբուրել այն ձեռքը, որ կկամենայի: Վախենում եմ, շրթունքներս հալւին ջերմութիւնից:

Մի քանիսը ծիծաղեցին՝ այս խօսքերը կա-

տակ ընդունելով, ոմանք փսփսացին: Ապա մի քանի ընկալեց լուութիւն տիրեց, յետոյ լոյսը վառեցին:

Արշալոյսի սրտում մեծ կասկած ծնւեց: Նա, կարծես, հասկացաւ, թէ ինչ է կատարում ընկերով մէջ, շտապով բարեւեց ամէնքին ու դուրս եկաւ:

Բոլորն էլ ցրւեցին:

\* \*

Ամեն ինչ լուռ էր: Քամին դադրել էր, լուսինն էր լողում երկնքի կապոյտում: Արշալոյսը մտածում էր: Ահա Սաշան, գրաւիչ, պայծառ աչքերով, նա արդէն կարողացել է համակրութեան, գուցէ և սիրոյ ակնարկ խլել անտարբեր ձևացող օրիորդից: Նրա մէջ մի ատելութիւն ծնւեց դէպի վարագեանի հարստութիւնը, դէպի իր գգայուն ընկերը՝ Սաշան...

Մայթի վրա շկանդնեց նա, ինչպէս անում էր միշտ, ձեռնափայտով գետնին չխփեց, երկնքին չնայեց, այլ շտապ ու մոլոր քայլերով գընաց դէպի տուն:

Գիւղի միջով անցնում էր առուն՝ հանդարտիկ ու լուռ: Կամուրջի վրա մի շուն, յանկարծակի, վեր թռաւ և բարձրաձայն հաղեց: Արշալոյսն առանց մտածելու ամուր խփեց նրան իր հաստ գաւազանով: Շունը փախաւ, խղճալի կողկողոց արձանեց: Սգւեց գիշերւայ ծանր լըութիւնը:

Ահա նեղ փողոցները: Նեղութեան պատճառով լուսինը չի թափանցել, մութն է: Թախձոտ սիրտը սովորութիւն ունի լուսնի առաջ

բորբոքեւ, խորանալ: Եթէ մութը չլինի, սիրտը կճաքի յուզումից:

Ահա և նրա տունը: Մառան աչքերը տրորելով՝ դուռը բաց արաւ: Շունը փաթաթւեց նրա ոտները:

— Սո՛ւս կաց, Բողար, սո՛ւս, սիրտ չունիմ, սո՛ւս կաց,— ասաց նա դողդոջուն ու թախծոտ ձայնով:

Մտաւ իր սենեակը: Պարզ, հասարակ մի սենեակ էր այդ: Մի գրասեղան գրքերով ծածկւած, մի մահճակալ, մի քանի աթուռ ու մի քանի անհրաժեշտ իրեր: Այս էր նրա ամբողջ կարողութիւնը: Մառան ճրագը դրեց սեղանի վրա, լոյսը բարձրացրեց:

— Չայ շե՞ս ուզում,— հարցրեց ծառան:

— Չէ՛, կարո՛ւ, չէ, ոչինչ չեմ ուզում, դու գնա՛, քնի՛ր, հանգստացիր:

Մառան նայեց նրան զննող հայեացքով ու մնաց կանգնած:

— Հիւանդ ես, աղա՛, — հարցրեց նա:

— Չէ՛, հիւանդ չեմ: Դու գնա, քնի՛ր: Ինչ ասացի՞ր, կարո՛ւ: Հիւանդ: Եթէ ուզում ես, այո՛ւ: Այո՛ւ, քիչ հիւանդ եմ, հոգիս է ցաւում:

Մառան ղարմացած նրան էր նայում:

— Գնա՛, գնա՛, հիւանդ չեմ, հէնց այնպէս ասացի:

Արչալոյսը ճրագը մարեց և առանց հանւելու ընկաւ մահճակալի վրա: Պատուհանները փակ էին, սենեակը խաւարեց: Սատանան ու հրեշտակը, նախանձն ու սէրը կուռում էին նրա հոգում:

III

Անցաւ մօտ երկու ամիս: Սաշայի պատմածի ազդեցութիւնը Մանեայի վրա հսկայական էր: Նա չէր կարողանում մոռանալ այն բոպէն, երբ Սաշան վերջացրեց իր խօսքը, և ճրագը վառեցին: Սաշայի աչքերը կրակի պէս կայծեր էին արձակում: Այդ կայծերը նրա սիրտը հրդեհ ձգեցին: Մանեան երկու ամսւայ ընթացքում մտածելու ուրիշ նիւթ չունէր: Նա չէր կարողանում աշխատել: Երբ գիրքը ձեռքն էր առնում կարդալու, աչքերը սահում էին թերթերի վրայով, իսկ ուշադրութիւնը սլանում էր հեռուն, նա կարդում էր, բայց ոչինչ չէր հասկանում: Երբ երեկոները ճրագը հանգցնում էր և անկողնում քնել չէր կարողանում, միտքն անդադար գործում էր: Նրա ուղեղը տաքանում էր, երեակայութիւնը զանազան պատկերներ էր գծագրում աչքերի առաջ: Այդ բոլոր պատկերների կենդրոնական դէմքը Սաշան էր: Չէ՛, այլևս նա չէր կարողանում ազատւել այդ մտքերից: Նա իր ծրագրին հաւատարիմ մնալ չկարողացաւ: Սաշային սիրում է, և այլևս չխոստովանելն ինքնախաբէութիւն է, որոշեց նա: Այն ժամին, երբ իր միտքն այդ եզրակացութեան եկաւ, հոգին լցւեց քաղցր յոյզերով: Նա այլ ևս այդ մտքից չէր վախենում: Բայց այդ մասին ոչինչ չէր ասում ոչ ոքի, նոյնիսկ Սաշային ոչ մի ակնարկով անգամ չէր հասկացնում, որ ինքը գաղտնի վճիռ ունի իր հոգում: Երբեմն սիրոյ դգացումը նրան չափազանց յուզում էր,



նրան բռնում էր, շատ քնքոյշ ու ջղոտ մի կարոտ: Երբեմն, մենակ ժամուն արասուում էր: Եւ արցունքները ջերմ էին դարնան անձրևի պէս: Նա մտածում էր և Արշալոյսի մասին: Խղճում էր նրան, նրա աչքերից վախենում էր: Զգում էր, որ այդ երկտասարդ տղամարդիկ իր պատճառով կընդհարւին: Անկասկած է, որ երկուսն էլ անտարբեր չեն դէպի ինքը: Սաշայի ցնորական պատմածքը, մանաւանդ վերջաբանը, դրականապէս վճռում է, որ նա արդէն բոլորովին տարւած է, որ իրան կորցնում է յուզումից: Սաշան կարող էր խոր տարւել, յափշտակւել, իրեն մոռանալ: Արշալոյսի զգացումները վաղուց էր նկատել: Չէ՛, նրանք լուռ մնալ չեն կարող: Եւ որքան մտածում էր, այնքան աւելի էր երկնչում: Ա՛խ, Տէ՛ր Աստուած, ի՞նչ անի, որ բաղխում չլինի, որ նրանց ընկերութիւնը տխուր վախճանով չխորտակւի: Մանեան վշտանում էր: Միրոյ ու երկիւղի յոյգերը խառնւել էին նրա հոգում: Լո՛ւ՛, որոշեց նա, բայց զգում էր, որ միշտ լուռ մնալու ոյժ չի ունենայ:

Սաշայի պատմութիւնը Արշալոյսի համար մի մեծ հարւած էր: Նա ոյլ ևս չէր կասկածում, որ Մանեայի պատճառով էին Սաշայի ւարտում կայծեր բորբոքւում, նորից նրա հոգին «խռովել է և կարօտը գլուխ է բարձրացրել»: Ուրեմն, հսկայ խոչնդոտ է երևան եկել: Սաշան աւելի գրաւիչ երևալու համար բոլոր յարմարութիւններն ունի: Արշալոյսին երբեմն պաշարում էր մի հսկայ, չար միտք, բայց նա իրեն զբաւում էր: Նրա սև աչքերը ահարկու փայլ էին ստանում: Նա սկսում էր մի դառն ատելութիւն տածել դէպի Սաշան: Այդ ատելութիւնը այն-

քան էր աճում հոգում, որ ամբողջապէս կլանում էր նրա էութիւնը: Նա սկսում էր ամէնքին, ամբողջ աշխարհը ատել: Միայն Մանեային չէր ատում: Բայց սրա պատկերը բորբոքում էր դէպի ամէնքն ունեցած ատելութիւնը: Մանեան կամ իմը պիտի լինի, կամ ոչ ոքինը: Հակառակ դէպքում, Աստուած գիտէ, թէ ինչեր կանեմ ես, անցնում էր նրա մտքով:

Իսկ Սաշա՞ն: Նա մոռացել էր ամէնքին, իր յոյգերով, իր վառ երևակայութեան նկարած պատկերներով էր ապրում: Նրա համար միմիայն Մանեան կար ու այն մտքերը: որոնք Մանեայի շուրջն էին պտտւում: Սաշայի սէրը մի քնքոյշ զննիւր էր, որ օրօրում էր գետակի փերի երփներանգ ծաղիկները, մի քամի, որ մըտնում էր Աստուածածնի այրը և շոյում աղաւնութաւշեայ կուրծքը: Սաշան գիտէր, որ Հին, իր տարիքը դարերով հաշւող կամուրջի տակ մի խոր լիճ կայ, այդ լճի մէջ ապրում է յաւերժահարսը, ջրի չքնաղ ոգին: Լուսնեակ գիշերին նա դուրս է գալիս և նստում հսկայ ժայռի վրա: Իր մօտ է կանչում սիրահարւածներին, հարբեցնում իր շնչով, դիւթիչ պատմածքներ անում ջրի տակի աշխարհի մասին:

Մովային շուշանի սիրածը ջուրն է ընկել, այդ պատճառով էլ նա իր արմատները դէպի ջրի յատակն է ուղղում: Բայց ի գուր, նրա ետքը սիրահարւած է ոսկի ձկնիկի վրա: Զրաղացի առաջ մի սգաւոր ուռենի կայ: Նրա ճիւղերը կռայցել, հասել են գետին և ջրի մէջ մտնել: Նա անդադար լալիս է: Յաւերժահարսն ատում է, որ ուռենին մի չքնաղ աղջիկ ունէր, որ ծնւել

էր ջրվէժի մէջ, փրփուրից: Ճարպիկ գորաները փախցրել են և նւիրել իրենց արքայորդուն, որ ապրում է լճի մէջ, բիւրեղեայ ամրոցում...

Սաշան բարձրանում էր բլրի գագաթը: Այնտեղ քամին մերթ երգում էր մեղմիկ ու քնքոյշ, մերթ կատաղի աղմուկ էր բարձրացնում, քար ու քարափ իր գլխով տալիս: Այդ ժամին փոքրիկ մատուռը կուչ էր գալիս և բլրի կատարին կպչում: Նա քամուց վախենում էր: Եթէ այդ գիժը, յանկարծ, նրան ցած նետի, Ասուած իմ, քանի կտոր կլինի, և ամեն կտորը ո՛ւր կընկնի: Սաշան քամուց չէր վախենում: Նրան հարցեր էր տալիս, և քամին նրան պատմում էր Արագածի ծաղիկների մասին: Քամին ասում էր, որ ծաղիկները բոլորն էլ սիրահարւած են: Նա ասում էր, որ աստղերն էլ են սիրահարւած և գաղտնի համբուրւում են ծաղիկների հետ: Արուսեակը սիրահարւել է կապտաշեայ անմոռուկի վրա, որն աճում է ու ճոխանում Արագածի գագաթի Սև լճի ափին: Այդ աշխարհի ամենալաւ անմոռուկն է: Երբ լուսաբացը մօտենում է, և լճի վրա խաղում է զեփիւրը՝ քամու նագելի գուստրը, անմոռուկը զւարթանում է: Արուսեակն աճապարում է երևալ և համբոյրներ ուղարկել նրան: Բայց խանդոտ արևը շտապում է և իր կրակոտ շողերով խանգարում Արուսեակին: Այս խեղճը դեռ լիուլի չի վայելել սիրոյ հաճոյքը և տանջւում է կարօտը սրտում...

Սաշան շրջում էր փողոցներում գիշեր ժամանակ: Գնում էր, կանգնում այն փողոցում, ուր Մանեան էր ապրում: Նա Մանեայի մօտ չէր ջինսում, նրան ոչինչ չէր ասում, այլ միայն մըտածում էր նրա մասին...

Դեկտեմբերի մի օր էր: Արև էր: Դեռ ձիւն չէր եկել: Դասերը վերջացել էին, բայց դասատուները նստած էին ուսուցչանոցում: Սաշան էլ էր այնտեղ: Նա լուռ մտածում էր: Արշալոյսը գրքեր էր դարսում պահարանում: Մանեան գլուխը քարշ արած՝ մտածում էր և երբեմն աչքի պոչով Սաշային նայում: Արշալոյսն այդ նկատեց: Նա գունատեց, իրեն կորցրեց, մի գիրք պինդ նետեց յատակին, դարսած գրքերը նորից քանդեց և, այդպէս խառը թողնելով, մի աթոռ առաւ, նստեց ու մոայլեց:

Նկարչութեան ուսուցիչը, որ անտեղեակ էր նրանց հոգեկան դրութեան, դպրոցի համար բեմազարդ էր նկարում: Նա զարմացական հայեացք ձգեց Արշալոյսի վրա և ապա նորից իր աշխատանքի մէջ սուզեց: Նա իր գործը սիրում էր և այդ չորս ամսւայ ընթացքում չէր նկատում իր շուրջը կատարւածը: Նրա համար գոյներից ու ձևերից դուրս ուրիշ բան չկար:

Ներկը քսւում էր կտաւին, և գունատ կտաւը քիչ-քիչ ոգի էր առնում: Արդէն պարզ երևում էր մի ծառ, հեռւում գծազրւում էր աւերակ վանքի պատկերը: Հայկական ոճով կերտած երկնասլաց կաթողիկէի վրա նստած էին երկու աղաւնի: Աւելի հեռւում հազիւ նշմարւում էր մի հսկայ սար, նրա ստորոտում ոլորմոլոր տարածւում էր մի գետ: Որքան աշխատանքն առաջ էր գնում, նկարիչն իր մտքի պատկերները դրոշմում էր կտաւի վրա, այնքան նա մոռանում էր միւսներին:

Քիչ-քիչ Սաշան յուզուում էր: Լռութիւնը ազդում էր նրա վրա: Նրա մէջ բազմաթիւ խառն ի խուռն մտքեր էին արթնացել: Նա մի թղթի կտոր վերցրեց ու սկսեց խծածել: Գծեր էր քաշում ու մտածում: Նա անգիտակցաբար Մանեայի անունն էր գրում, մէկ-մէկ էլ Մանեային էր նայում: Երբ իր վախկոտ հայեացքը Արշալոյսի կնճռոտած ճակատին էր առնում, մի ծակող, մի ճմրող յոյզ էր զգում կրճքում: Սրշալոյսը բարկանում էր, նախանձն ու ատելութիւնը տիրում էին նրան: Սաշայի քաղցր բնաւորութիւնը լեղի էր դառնահամ նրա համար: Մանեան նկատում էր այդ լուռ պայքարը: Երկու ընկերոջ լուռ կռիւը ահ ու սարսափ էր լցնում նրա հոգին: Բայց նա սիրում է, սիրում է հակառակ իր կամքի: Իսկ եթէ յայտնւի, ում է սիրում, եթէ Արշալոյսի կասկածները ճշուի... Մանեան տանջում էր, արցունքները խեղդում էին նրան, քիչ էր մնում, որ ճշայ... Լռել, լռութիւնը ամենից լաւ է: Եւ նա ոյժ էր գործ դնում...

— Ի՞նչ էք կարծում, պարոններ, ասաց նրկարչութեան ուսուցիչը, վրձինը ցած դրեց, մազերի փունջը հեռացրեց ճակատից և քիչ հեռացաւ, որ հեռւից նայի նկարին:— Միթէ նկարը դուր չի՞ գալի: Չէ, լաւ բեմագորգ ենք ունենալու, իսկ և իսկ հայկական ճաշակով: Օրիորդ Մանե՛ա, ձեր կարծիքը ամենից առաջ:

— Լաւն է, — մեքենայաբար ասաց Մանեան: Բաւակախութեան մի ժպիտ անցաւ նկարչի դէմքով: Նա նայում էր նկարին լի հաճոյքի ու ինքնաբաւականութեան զգացմունքներով: Նա մտածեց և ասաց.

— Սաշա՛, դիտե՛ս, ինչ էի մտածում երեկ: Տէր Եսայու տանը պատածդ շատ դուր եկաւ ինձ: Երազ էր, թէ իրականութիւն, սուտ, թէ ճշմարտութիւն՝ միևնոյն է, միայն թէ գեղեցիկ էր: Ես ուզում եմ այդ նկարել, տե՛նենք՝ ինչ դուրս կգայ: Պիտի նկարեմ ու անունն էլ դրնեմ «Սիրոյ պարտէզ»: Ի՞նչ կասես, Արշալոյս, գեղեցիկ չէ՞ր:

— Հիւանդագին զառանցանքներ էին, ուրիշ ոչինչ, հիւանդ ուղեղը միայն այնպիսի ստեր կը հնարէր և իր ստերի վրա կհիանար, — ասաց Արշալոյսը և բարկացած կանգնեց տեղից:

— Ի՛նչ, — յանկարծակիի եկած և զարմացած՝ գոռաց Սաշան, — խնդրում եմ զդոյշ խօսել:

— Սպասեցէք, պարոններ՛ր, այս ի՞նչ է, հանդիստ, ամօթ է: Բայց այդպիսի ստերն են զարդարում աշխարհը: Այդ սուտն է հէնց գեղեցիկութեան մայրը:

— Այդ ամբողջ պատմութիւնը մի ցնորք էր, հիւանդ ջղերի զառանցանք: Միթէ չէի՞ք նկատում, ինչպէս էր ձեանում պատմելիս, կոտորտում, որպէսզի համակրութեան հառաչանքների տրժանանայ, — աւելացրեց Արշալոյսը:

— Ես պահանջում եմ, որ լռէք, թէ չէ... բղաւեց Սաշան, վեր թռաւ ու զայրացած բռնեց աթոռի թիկնոցից ու բարձրացրեց: Արշալոյսն իրան կորցրեց, ձեռքը ամուր սեղանին խփեց և միւս աթոռը վերցրեց: Նոյն վայրկեանին Մանեան մի սուր ձիչ արձակեց ու ընկաւ սեղանի վրա, հեկեկաց...

— Պարոններ՛ր, ամօթ է, դադարեցէ՛ք, — գոռաց նկարիչը: Սաշայի ձեռքերը թուլացան, աթոռը վայր ընկաւ: Նկարիչը բռնեց Արշալոյս-

սին և աթոռը ձեռքիցն առաւ: Արշալոյսը բարկութիւնից դողդողում էր, դէմքը այլայլած էր: Նա մի քանի անգամ մի անկիւնից միւսը գնաց: Մի դիրք ընկաւ նրա ոտքի տակ, նա վերցրեց, երկու կտոր արաւ, յատակին խփեց, ապա գուռը բացեց և դուրս գնաց՝ իր յետևից դուռը շատ ամուր խփելով:

Սաշան մի քանի վայրկեան կանգնեց մոլորւած, ձեռքը տարաւ դէպի ճակատը, շփեց, բռնեց իր փայլուն մազերը, աչքերը տրորեց և նոր ուշքի եկածի պէս՝ շուրջը նայեց: Յետոյ շտապով մօտեցաւ Հեկեկող Մանեային, ձեռքը դրեց նրա ուսին և աղերսական, քնքոյշ ձայնով ասաց.

— Օրիորդ Մանեա, ներէ՛ք, ներէ՛ք, որ այդպէս եղաւ: Հանգստացէ՛ք, խնդրում եմ, աղաչում եմ, հանգստացէ՛ք...

Մանեան գլուխը բարձրացրեց և իր արցունքոտ աչքերով նրան նայեց խոր, փորձող հայեացքով, որի մէջ սիրոյ շողն էր խաղում...

— Ը՛... հասկացա՛յ, — ձայնեց նկարչութեան ուսուցիչը, — երբ երկու ընկերներ կուռում են յանկարծ և առանց պատճառի, պէտք է մարաքնչող վարուժանը յիշել:

#### IV

Այդ տարին ձմեռը տաք էր, ձիւն չէր գալիս: Վատ տարի է, ասում էին գիւղացիները, ջուրը սակաւ կլինի:

Ձմրան տաք օրն էլ մեղմ է և անզօր: Բայց Արշալոյսը կարմրել էր ու քրտնեւ: Նա բարձրանում էր բլրաշարքը: Նրա միտքը սովորականի նման որսի յաջողութեան անակնկալներով չէր զբաղւում: Միայն հրացանն էր յիշեցնում, որ նա որսորդ է, որսի է գնում: Իսկ շունը, փոքրահասակ, ցատկոտան Բողարը, շտապով վազում էր, տիրոջից առաջ ընկնում, հեռանում, ապա կանգնում, յետ նայում: Ոչ սովորականի քաջալերական բացագանչութիւններն էին լսւում, ոչ այս կամ այն ուղղութեամբ շարժւելու հրամանները: Շունը նայում էր, նայում և, կարծես, յուսահատւած՝ յետ էր շտապում, զննող հայեացքով տիրոջը դիտում, մի քանի րոպէ սպասում և նորից վազում: Երբեմն Բողարին յաջողւում էր մի կաքաւ կամ մի սալամ թոցնել: Նա իսկոյն պարկում էր գետնին ու աչքի տակով յետ նայում: Բայց հրացանի պայթիւնը չէր լսւում, ծուխը չէր բարձրանում, և Բողարը տխրում էր, կամացուկ վրնկվնկում:

Արշալոյսը գնում էր ու մտածում: Արևն իջնում էր, հա իջնում: Օդն աւելի ցրտանում էր, աւելի խոնաւանում: Ահա՛ ժայռերը՝ իրար վրա դիզւած, հսկայ ու հպարտ: Նրանք, կարծես, ծաղրում են ժամանակը, որ անցնում է

անդադար, շատերին մաշում, բայց իրանց ոչինչ չի կարողանում անել: Նրանք արհամարհում են և այրող արևն, և խեղդող փոթորիկը և գետակը, որ հասում է խոր ձորում, կատաղած փորում նրանց հիմքերը, բայց գլորել չի կարողանում: Զուրը պարզել էր, կապտել, ծառերը մերկացել և տերևաթափ եղել:

Արշալոյսը ժայռերի մօտ կանգ առաւ, հրացանը գետնին յենեց և ձորին նայեց: Գետը խըշշալով հոսում էր: Նրան թւաց, որ գետը վիշտ ունի, մրմնջում է: Ուրիշի վիշտը նրան մխիթարում էր: Նա մէջքը ժայռին յենեց: Անմազերը ցաք ու ցրիւ թափուել էին ճակատին, իսկ աչքերը վերջալոյսին էին նայում մի թախճոտ, մի խորհրդաւոր հայեացքով: Որքան գրաւում էր բնութեան գեղեցկութեամբ, այնքան նրա ներքին տշխարհը քնքնչանում էր, հոգին միանում էր բնութեան հետ, և վշտձորը ձուլում էին խըշուէն գետի, դեղնած տերևի, մարող արևի հառաչների հետ: Արևմուտքն էլ կարմիր էր, բոցերը շերտ-շերտ դիզած:

Դիմացի ժայռի վրա աղաւնիները գուրգուրում էին իրար: Բողարը՝ աչքերը պլլած՝ նրանց էր նայում և մէջքով տիրովը քսում: Արշալոյսի մէջ մի բոպէ ցանկութիւն ծնւեց նրանց գնդակահարել: Նա նոյն իսկ հրացանը բարձրացրեց: Բողարը ուրախութեան մի շարժում արաւ, ապա մի ոստիւն, և կպաւ գետնին:

— Զէ', չէ', Բողար, — ասաց նա, — Հարկաւոր չէ: Նրանք սիրում են, գուրգուրում, ոչ ոք գրկւած չէ, բոլորն էլ զոյգ-զոյգ են, թո՛ղ ապրեն...

Եւ հրացանը ցած իջեցրեց: Շունը նստեց, տխրեց, նօթերը կիտեց, ապա տեսնելով, որ տէրը գնում է, ինքն էլ ցատկեց ու առաջ վազեց: Արշալոյսը տուն էր վերադառնում: Մըթընչաղը պատում էր գետինը:

Երբ նա տուն հասաւ, դարդերը շատացան. գիշերը վշտի ընկերն է: Սենեակը մութն էր, ծառան չկար: Մանեայի պատկերը կենդանացաւ նրա ուղեղում, և նրան թւաց, որ խաւարի միջից հարիւրաւոր աչքեր ակնարկում են, թէ ձեռքիցը խլեց նա, Սաշան, ընկերդ: Իսկա՞պէս: Գուցէ դեռ չէ: Նա հրացանը մահճակալի վրա ձգեց և դուրս գնաց: Աստղերը դուրս էին եկել նրան նայելու, լուսին չկար, և նրանք առկայծում էին անվախ ու գունեղ: Նա անցաւ փողոցներով: Ահա լայն խճուղին: Մի քայլ ևս, և նրա սենեակի պատուհանները կերևան: Իսկ որ, ահա երկու լուսաւորւած պատուհան: Վարագոյրները չեն քաշւած: Նա կանգնեց պատուհանի տակ: Բարձր էին: Արդեօք մենա՞կ է, յուսահատօրէն մտածեց նա: Փողոցը դատարկ էր, լուսթիւնն էր իշխում...

Փողոցում մի սայլ կար, հին ու անպէտք: Վաղուց էր այդ տեղ ընկած: Բայց այդ սայլը երբէք, ոչ ոքի այնքան չէր ուրախացրել, որքան այժմ նրան: Որքան ոյժ ունէր, հաւաքեց, սայլը պատին մօտեցրեց, բարձր ցցեց ու վրան բարձրացաւ:

Ճրագը պլպլում էր անվրդով: Մանեան ընկած էր մահճակալի վրա: Սաշան մի ձեռքով գրկել էր նրա գլուխը, խաղում էր նրա մազե-

րի հետ, և երջանկութիւնն էր փայլում նրա աչքերում: Այո՛, տեսածը ճիշդ էր, ապակին չէր խաբում: Սաշան համբուրեց Մանեայի ձեռքը: Արշալոյսի աչքերը մթնեցին: Սիրտը խըփում էր կրծքի վանդակին, խփում, քիչ էր մնում, որ կտորի: Նրան, յանկարծակի, բռնեց մի գազանային ցասում: Մի քանի վայրկեանից յետոյ նա շտապով իջաւ և կատաղած բացեց սենեակի դուռը: Նա չէր իմանում, ինչ է անում, իրան կորցրել էր: Ճրագի լոյսի տակ նա ահռելի կերպարանք ստացաւ, աչքերն արիւնով լեցւեցին: Նա յուզումից դողում էր: Սաշան մեռելի դոյն ստացաւ, կանգնեց տեղից: Մի սարսափ պատեց Մանեային, նա բռնեց մահճակալից: Մի քանի վայրկեան նրանք քարացան:

— Սաշա՛, դաւաճա՛ն ընկեր, խլեցի՞ր... — երերուն, դարդոտ, սոսկում ներշնչող ձայնով գանչեց Արշալոյսը:

Մանեան ճչաց լի հառաչանքներով ու երկիւղով: Նրա ճիշը կպաւ Սաշայի սրտին: Ու գըրգըռեց հիւանդ ջղերը:

— Մանեա՛, Մանեա, — գոչեց Սաշան ու դէպի Մանեան վազեց: Կարծես խլում էին նրան իր ձեռքից:

— Հեռացի՛ր նրանից, հեռացի՛ր, — գոռաց Արշալոյսը:

Սաշան ուղեց գրկել Մանեային: Նոյն վայրկեանին Արշալոյսը գրպանից հանեց ատրճանակը և կատաղած նրանց վրա յարձակեց: Սաշան մի ակնթարթում բռնեց Արշալոյսի ձեռքը, սակայն որոտաց ատրճանակն, և գնդակը կպաւ Սաշայի կրծքին: Սաշան գլորւեց գետին... Մանեան ընկաւ ուշաթափ...:

\*\*\*

Երբ ատրճանակը պայթեց, Արշալոյսը, կարծես, խլացաւ: Երբ Մանեայի ճիշը լսեց, սթափւեց, տեղիցը շարժւեց: Երբ Սաշայի հառաչանքներն ականջին հասան, ըստէարար հասկացաւ, որ ընկերը գնդակահար եղած է: Մի քանի վայրկեան կանգնեց անորոշ դրութեան մէջ: Աչքերը բան չէին տեսնում, ոտքերը, կարծես, կապւած էին: Ատրճանակը ձեռքից ընկաւ: Նա յետ քաշեց կրծքի վրայի շորերը, որովհետեւ թըւում էր, որ խեղդւում է: Պարխափելով դուռը բացեց, ցուրտ օդը նրան ուղքի բերեց: Նա հասկացաւ, որ պէտք է հեռանալ, փախչել էինքն էլ չիմացաւ, ինչպէս տուն հասաւ:

Ծառան տունը չէր: Բողարը փաթաթւեց նրա ոտքերին: Նա ձայն չհանեց, վախենում էր թւում էր, որ իր ձայնից սրտածաք կլինի: Նա ընկաւ մահճակալի վրա: Երկար ժամանակ ոչինչ չէր հասկանում: Թւում էր, որ հեռու, գիւղի միւս ծայրում ինչ որ աղմուկ բարձրացաւ: Ահա նրա ականջին են հասնում բաղմաթիւ մարդկանց մրմուռներ, շները ոռնում են: Ամբոխը մեծացաւ, մեծացաւ և շարժւեց: Մրմուռը մօտակայ փողոցում է լուում: Մէկը ճչում է լալկան, սիրտ մաշող ձայնով, նման այն ձայնին, որ նա լսել է մի ժամանակ, բայց ե՞րբ, չէր յիշում: Մարդիկ մօտենում են ու մօտենում: Ահա նրանք բարձրացան պատերի վրա, նայում են պատուհաններից, դռներից: Ահա առաստաղում ծակեր բացւեցին, և մարդիկ ամեն կողմից ներս են թափւում, մրմուռում են և սարսա-

փելի աչքերով նայում: Նա աշխատում էր չտեսնել, աչքերն ամուր խփում էր, շատ պինդ, բայց ոչինչ չէր օգնում: Մարդիկ թափուում էին, հա թափուում...

Եւ այսպէս երկար, շատ երկար... Մէկ էլ նրան թւաց, որ մի որոտ լուեց, մօտ, շատ մօտ, հէնց իր դիւի մօտ: Նա վեր թռաւ տեղից: Ամեն ինչ չքացաւ, մութ սենեակը մնաց: Բացեց պատուհանը: Դուրսը խաղաղ էր և ցուրտ: Նա ականջ դրեց, թւաց, որ իսկապէս հեռուից անորոշ աղմուկ է լսում: Փորձեց մտածել և յաջողեց: Նա հասկացաւ, որ մի սոսկալի բան է պատահել, մտածեց, երկար մտածեց: Նա խաւարի միջից նկատեց, որ Բողարը իր առաջ կանգնած՝ նայում է: Փնտրեց հրացանը, դտաւ, մատներով ծիծը շոշափեց: Ամեն ինչ տեղն էր: Յիշում էր, մի ժամանակ լցրել էր, պատրաստել: Հրացանը դէպի Բողարը մեկնեց: Շունը չփախաւ, և, կարծես, ուրախացաւ Ձեռքի մի շարժում, և սենեակը լցեց ծխով: Նրա ականջները խլացան, և Բողարը ճշաց՝ սկզբում բարձր ու հնչուն, ապա քչքչ ձայնը ծանր տնքոցի փոխուեց և յետոյ իսպառ ոչնչացաւ: Արշալոյսը շօշափեց շանը, և նրա մատները մի տաք բանի կպան, նա բնագգամամբ ձեռքը վերմակին քսեց: Մի քիչ կանգնեց, մտածեց, ականջ դրեց: Լուռ էր, ոչինչ չէր լսում: Յանկարծ, նրա միտքը մի ուրիշ բան ընկաւ: Նա բարձր շուռ տուեց, խարխափելով շօշափեց, փնտրածը չկար: Նա յիշեց, որ այդ մի տեղ թողեց, մի սարսափելի տեղ: Նա ձեռքը հրացանին քսեց, դատարկ էր: Հրացանը ձգեց և դուրս եկաւ: Դուռը չփակեց:

\*\*\*

Կէս գիշերն արդէն անցել էր: Օդն աւելի ու աւելի ցրտանում էր: Թէ ուր էր գընում Արշալոյսն, ինքն էլ չգիտէր: Միտքը թափառում էր, ոտքերը բնագգօրէն առաջ էին գընում: Ոչ ոք չպատահեց նրան, ոչ մի ձայն չըլտեց նա: Իր քայլերի ձայնն էր միայն մերթլուում, մերթ լուում աւելի քան ուժեղ, աւելի քան ահարկու: Նա գնում էր ծուռումուռ փողոցներով, գնում էր առանց հասկանալու, առանց որոշելու՝ ո՛ւր և ի՛նչու: Մի անսովոր, շճեցնող զգացում պատել էր նրա էութիւնը՝ սիրտը, ուղեղը, ամբողջ մարմինը: Նա քշել էր, չէր կարողանում ըմբռնել սոսկումի ահուկելութիւնը: Յանկարծ, մի աւելի ցուրտ օդ կըպաւ նրա երեսին: Նա զգաց, որ ձորին է մօտեցել: Ահա կամուրջը, մեծ, հնադարեան կամուրջը: Նրա բարձր կամարները ահա հարկուրաւոր տարիներ է, որ լսում են գետի լացն ու կոծը, խինդն ու ցնծութիւնը:

Արշալոյսը կանգ առաւ: Նա ականջ էր դընում: Նա լսում էր գետի յաւերժական խշշոցը, որ կամարների տակ աւելի խորհրդաւոր, աւելի օրհասական ձայներ էր արձակում: Մի նոր միտք ծնեց նրա գլխում, աւելի լաւ չէ՞ գըրկել այիքների հետ: Բայց սեպացած ժայռերի վրա նստած տան պատուհանից մի լոյս էր երեւում, ճրագի աղօտ լոյս: Այդ լոյսը նրա հոգում վերականգնանացրեց կեանքի քաղցրութեան յոյգը: Յոյգերն ու մտքերն իրար խառնեցին: Նրա սիրտը լցեց ցաւերով, նա զգաց, որ իր

ուտները թուլանում են, որ մարմինը այրում է: Ձերմը բռնել էր նրան, ուղեղն սկսեց սաւառնել, մտքերը սլացան: Նրա առաջ պատկերանում էր իր մանկութիւնը, երբ ինքը վազում էր փողոցներում, յիշեց հօրն ու մօրը, որոնք վաղուց էին հրաժեշտ տւել աշխարհին: Յիշեց իր քրոջը, որ ապրում է հեռաւոր գիւղում և շատ է սիրում եղբօրը: Յիշեց քրոջ ամուսնուն, այն հարբեցող, կոպիտ արարածին, և մի սուր ցաւ զգաց իր այդ ցաւոտ հուժեամբ անգամ... Նրա մտքերը բոլորովին խառնւեցին, անկապ, անիրական պատկերները պաշարեցին նրան... Եւ նա շարունակեց իր խաւար ուղին: Լոյսը դեռ չէր բացւել, երբ նա կանգ առաւ մի մեծ դարբասի առաջ: Խարխալելով գտաւ հնչակը և ջղոտ ձեռքերով, դողդողալով պինդ խփեց: Հնչակի սուր ձայնը ցրւեց դադարի փողոցում: Նա ցնցւեց, կարծես, խոր քնից վեր թռաւ: Նորից խփեց կրկին ու կրկին անգամ...

Գաւառական ոստիկանութեան պետի տունն էր: Դուռը բացւեց և ապա նորէն ծածկւեց Արշալոյսի ետևից...

\* \* \*

Այդ գիշերը գիւղի համար արհաւիրքի գիշեր էր: Փողոցներում սոսկումն էր իշխում: Տիրում էր խոր լռութիւն՝ վշտի պէս սև: Գետի սզերգն էր միայն տարածւում, երբեմն էլ բարձրանում էր շան ոռնոցը: Ապա նրան հետևում էին ուրիշները: Եւ այդ սրտմաշուկ ձայները տարածւում էին օդի մէջ և բուռի թևերով ծեծում ամբար գոցւած պատուհանները:..



## ՎԱՅՐԵՆԻՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — ԱՆԴՐՈՆԻԿԷ, վէպ յոյն յեղ. կեանքէ, Ս. Բսէնոսի, թարգմ. Ի. Ա. Երան: Գին՝ \$1.00:
- 2, 3, 4 սպառած:
5. — ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՆՆԵՐԸ, Յ. Յ. Չազմազճեանի: Գին՝ 25 սէնթ:
6. — ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԳԱՐԱՆ, գին՝ \$2.50, Տաճ-կաստանի համար զեղջւած՝ 37.50 դրուշ:
7. — ՌՈՒՍ-Ս. ՅԵՂ. ԾՐԱԳԻՐԸ, Թրգմ. Ն. Հան-գոյց: Գին 10 սէնթ, Տաճկ. 2 դրուշ:
8. — ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԽԸՆ-ԴԻՐԸ, Ն. Տ. Ս. Թ. -ի: Գին՝ 25 սէնթ:
9. — ՍՕՑԻԱԼԻՉՄԸ ԵՒ ԴՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵ-ՐԸ, Էնրիկօ Յէրրիի, թարգմ. Ա. Իսրայէ-լեան: Գին՝ 25 սէնթ:
10. — ԻՄ ԵՂՔԱՅՐ ԳԻՒՂԱՑԻՒՆ, Էլիդէ Ռեբիւ, թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան: Գին՝ 5 սէնթ:
11. — ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՈՒՂԻՂ ՃԱ-ՆԱՊԱՐՀ, Միքայէլ Նալբանդեանց: Գին՝ 25 սէնթ:
12. — ԳՐԻՍՏՈՍԻ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ, Վ. Խորէնի: Գին՝ 5 սէնթ:
13. — ԿՐԷՆԳԸՊԻԼ, (վէպ) Անաթօլ Յրանսի, Թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան, Գին՝ 5 սէնթ:
14. — ՉԱՅՐՈՅԹԻ ՕՐԸ, Լէօնիդ Անդրեէվ, Թրգ-Ա. Մ.: Գին 5 սէնթ:
15. — ԻՉՄԻՐԼԵԱՆ ԱՔՍՈՐԱՎԱՅՐԻՆ ՄԷՉ, Կ Բասմաջեան: Գին 10 սէնթ:


- 16. ԵՐԱԶՍ, Յ. Արթուր: Գին՝ 5 սէնթ:
- 17. — ԴէՊի ԵՐԿԻՐ, Է. Ակնունի: Գին 10 սէնթ:
- 18. — ԱՅԴՊԷՍ ԷՐ, Լէօնիդ Անդրեէվ: Թարգ. Ա. Մ.: Գին՝ 10 սէնթ:
- 19. — ՄԻԱՅ. ՆԱՀԱՆԳ. ՍՕՑԻԱԼԻՍՏ. ԿՈՒՍԱԿՑ. ԾՐԱԳԻՐԸ: Թրգ. Ն. Մանկունի: Գին 2 սէնթ:
- 20 — ԲՈՂՈՔԻ ՉԱՅՆ: Է. Ակնունի: Գին 20 ս.
- 21. — ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ: Ճօն Ըսպարհօ: Թրգ. Ն. Մանկունի: Գին 25 Ս.
- 22. — «ՀԱՅՐԵՆԻՔ» ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻ, Ի նպաստ Մասունի, (Սպառած) Գին 25 սէնթ:

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ I

- 23. — ՄԱՆԵԱ, Պատմաժ. Ս. Թորոսեանի, Գին 10 սէնթ:



Շուտով սպազրոքեան կյանձնի ճէֆ ԼՕՆՏՕՆԻ „ԶՐԱՒՈՐԻՆ ՈՅԺԸ“ պատկաճֆր:



31788

ԳԻՆ 10 ՍԷՆԹ

ԴԻՍԵԼ

HAIRENIK PRESS,

7 BENNET ST., BOSTON, MASS.